Արձանագրություն N 2
«ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/04» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» մայիսի 2020թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Ավետիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Ոսկանյան
Ա. Նալբանդյան
Ա. Հովսեփյան
Լ. Հարությունյան
Լ. Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Փ. Խաչատրյանը

1. Գնանշման հարցման հայտեր ներկայացրած կազմակերպությունների մասին
(Ա. Ավետիսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում Armeps համակարգի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1	«Ցենտրոնիկս» ՍՊԸ	Էլ. Փոստ; cnx@centronix.biz

բ) հայտերի վերաբերյալ հարցադրումներ և պատասխաններ եղել են.

Հարցադրում

1. ՄԱՍ 1, 1.1 ենթակետում նշված է, որ Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 3 հավելվածում, սակայն հավելված 3–ը Երաշխիքի ձևանմուշ է, խնդրում եմ պարզաբանել:
2. ՄԱՍ 2, 2.3 ենթակետում նշված է, որ համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով). (Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից): Եթե մասնակիցը համատեղ գործունեության կարգով է մասնակցում մրցույթին և եթե կոնսորցիումի անդամներից որևէ մեկը ՀՀ ռեզիդենտ չէ, արդյո՞ք հայտում ներառված Հավելվածները պետք է ստորագրվեն երկու ընկերությունների կողմից (ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող ընկերություն՝ կնիք և ստորագրություն, ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ընկերություն՝ էլեկտրոնային ստորագրություն):
3. Խնդրում եմ պարզաբանել, եթե մասնակիցները մրցույթին մասնակցում են համատեղ գործունեության կարգով, արդյո՞ք հայտի ապահովումը բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու դեպքում յուրաքանչյուր մասնակից պետք է ներկայացնի առանձին, թե՞ պետք է ներկայացվի մեկ բանկային երաշխիք, որտեղ նշված կլինեն երկու ընկերությունների անունները:

4. Խնդրում եմ պարզաբանել, նշված մրցույթին համատեղ գործունեությամբ մասնակցելու և հրավերով սահմանված նախագծման աշխատանքներն իրականացնելու դեպքում, եթե հետագայում նշված նախագծման հիման վրա հայտարարվի մրցույթ, արդյո՞ք չեն կիրառվի սահմանափակումներ համատեղ գործունեության անդամների մասնակցության համար:

Պատասխան

1. Ենթակետում նշված Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում /վրիպակ/:
2. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.
3. Հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացվում է մասնակիցներից որևէ մեկի կողմից, ինչը նախապես պետք է նախատեսել երկու կողմերի միջև կնքվող համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիումի):
4. Նշված հարցը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէ, բայց միևնույն ժամանակ գնման առարկան բնութագրելիս պետք է հաշվի առնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ 0:

<u>2. Գնանշման հարցման հայտերի բացման մասին</u>
(Ա. Ավետիսյան)

1. Հրավերով սահմանված՝ հայտի կազմման և ներկայացման, բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

2. Մասնակցի կողմից առաջարկված գինը ներկայացված է աղյուսակում.

ՀՀ	Մասնակիցների անվանումները	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները				**Նախահաշվային գին**
		ՀՀ դրամ				
		Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր	
Չափաբաժին N1						
‹‹ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի›› նախագծման ծառայություններ						
1	«Ցենտրոնիկս» ՍՊԸ	37,500	7,500	-	45,000 եվրո /24,014,700 ՀՀ դրամ, 27.05.2020թ. դրությամբ ՀՀ	**30,000,000**

					կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով (533.66)/	

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ 0:

3. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի, 67-րդ կետի պահանջները՝

Հանձնաժողովը որոշեց ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը գանձապետական «900008000466» հաշվեհամարին փոխանցվել է, թե ոչ՝ դրա մասին ստանալով իրավասու մարմնի գրավոր եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ա. Ավետիսյան

Անդամներ՝ _____ Լ. Ոսկանյան

_____ Ա. Նալբանդյան

_____ Ա. Հովսեփյան

_____ Լ. Հարությունյան

_____ Լ. Հակոբյան

Քարտուղար՝ _____ Փ. Խաչատրյան